

## **ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ՎՃԻՌՆԵՐԻ ՎԻՃԱՐԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԴԵՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ**

«Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ գլուխը վերնագրված է «Վճռի վիճարկումը» և պարունակում է միայն մեկ՝ արբիտրաժային վճռի վիճարկման բացառիկ միջոցի՝ չեղյալ ճանաչմանը և դրա հիմքերին նվիրված 34-րդ հոդվածը: Նշված հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «արբիտրաժային տրիբունալի վճռի վիճարկումը դատարանում կարող է իրականացվել միայն սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան այն չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմելու ճանապարհով»: Մինևսյն ժամանակ, նույն օրենքի 8-րդ «Վճռի ճանաչումը և կատարումը» գլուխը ներառում է «ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու հիմքերը» վերնագրով 36-րդ հոդվածը, որում սահմանված են արբիտրաժում պարտված կողմի իրավունքը՝ դատարանից «խնդրելու»<sup>2</sup> մերժել արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, ինչպես նաև նշված է այդ հիմքերի սպառնիչ ցանկը<sup>3</sup>: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածներում սահմանված հիմքերը գրեթե նույնությամբ համընկնում են, (հիմքում ունենալով Նյու-Յորքի Կոնվենցիայի V հոդվածը) արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկա-

---

<sup>1</sup> ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ ի. գ. դ., դոցենտ Վ. Հովհաննիսյան:

<sup>2</sup> «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը պարունակում է «այն կողմի խնդրանքով, որի դեմ այն ուղղված է» արտահայտությունը: Հաշվի առնելով, որ այս դեպքում ևս գործ ունենք քաղաքացիական դատավարության առանձին տեսակի վարույթի հետ, առկա է արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման կամ կատարման մերժման վարույթը ևս ՀՀ ՔԴՕ-ում առանձին «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթը» գլխում կարգավորելու հրամայականը:

<sup>3</sup> Հարկ է նշել, որ 36-րդ հոդվածը մեկտեղել է ՀՀ կամ Կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում (ասել է թե օտարերկրյա) կայացված արբիտրաժաֆյին վճիռների ճանաչման և հարկադիր կատարման կարգավորումը, ինչը ևս արդարացված համարել չի կարելի:

դիր կատարումը մերժելու մասին դիմում ներկայացնելու դեպքում ևս անխուսափելիորեն տեղի է ունենում այդ վճռի վիճարկում՝ հակադիր շահերով օժտված դատավարական կողմերով, որտեղ մի (պարտատեր) կողմը ձգտում է դատարանում հասնել արբիտրաժային վճռի ճանաչմանը և/կամ հարկադիր կատարմանը, իսկ մյուս (պարտապան) կողմը նույն դատարանից խնդրում է մերժել արբիտրաժային վճռի ճանաչումը և/կամ հարկադիր կատարումը. ծագում է իրավունքի մասին վեճ: Դատավարագիտությունում ընդունված մոտեցման համաձայն, հատուկ վարույթի գործերով, և, ընդհանրապես, եթե առկա է իրավունքի մասին վեճ, ապա այն պետք է քննվի կա՛մ ընդհանուր հայցային, կա՛մ հատուկ հայցային վարույթի կանոններով: Ընթերցողի մոտ կարող է առաջանալ հետևյալ հարցը. թե ի՞նչ իրավունքի մասին է առաջանում վեճն արբիտրաժային դատարանի վճռի վիճարկման գործերով: Պատասխանելով այդ հարցին՝ կարող ենք փաստել հետևյալը. ընդհանրապես, դատարանին ներկայացվող պահանջը կարող է լինել երկու տեսակի՝ նյութաիրավական, ինչը նշանակում է, որ հայցվորը (դիմողը) դատարանից խնդրում է պարտավորեցնել պատասխանողին կատարել որոշակի գործողություն, ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, ճանաչել իրավունքի առկայություն կամ դրա բացակայություն: Հաջորդ տեսակի պահանջն ունի դատավարական (պրոցեսուալ) բնույթ, այսինքն դատարան ներկայացվող պահանջը (որով խնդրարկվում է վերոհիշյալ գործողության կատարումը կամ դրանից ձեռնպահ մնալը) նյութաիրավական չէ: Տվյալ դեպքում, դատավարական պահանջով դիմող կողմն է վերջո ձգտում է պաշտպանել իր այն նյութական իրավունքը, որը սահմանված է (ծագել է) արբիտրաժային վճռով: Այսինքն, սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությանն ուղղված ակտի հարկադիր կատարում պահանջելը (ինչն ինքնին հանդիսանում է պրոցեսուալ պահանջ) հանդիսանում է այդ ակտով նախատեսված նյութական իրավունքի իրավական պաշտպանության միջոց: Հետևաբար, տեղի է ունենում արբիտրաժային վճռով սահմանված նյութական իրավունքի հարկադրական իրացում և այդ ակտով նախատեսված նյութական իրավունքի հարկադիր կատարումը դառնում է վճռով հաստատված նյութական իրավունքի իրավական պաշտպանության միջոց: Եթե մյուս կողմն առարկում է դրա դեմ Արբիտրաժային օրենքով նախատեսված հիմքերով, դա նշանակում է,

որ դատարանում այդպիսի առարկությունն ներկայացնող կողմը ձգտում է ապացուցել նյութական իրավունք սահմանող արբիտրա-  
ժային ակտի ոչ իրավաչափ լինելը: Սա նշանակում է, որ եթե ար-  
բիտրաժային ակտի դեմ առարկող կողմը կարողանա ապացուցել  
դրա ոչ իրավաչափ լինելը, ապա դրանով իսկ կզրկի մյուս կողմին՝  
արբիտրաժային ակտով սահմանված նյութական իրավունքի իրա-  
վական պաշտպանությունից, քանզի ոչ իրավաչափ ակտով նախա-  
տեսված իրավունքն իրավական պաշտպանության ենթակա չէ:  
**Տվյալ դեպքում, իրավունքի իրավական պաշտպանության միջոց է հանդիսանում արբիտրաժային ակտի հարկադիր կատարումը,** ո-  
րում, նկարագրված իրավիճակում, պետական դատարանը կմերժի:  
Նույն տրամաբանությունն է գործում նաև արբիտրաժային վճիռների  
ճանաչման պարագայում: Այսպիսով, առաջ է գալիս պրոցեսուալ  
պահանջով վեճ, որն ուղղակիորեն ազդում է նյութական իրավունք-  
ների վրա, քանզի դատարանը, մերժելով արբիտրաժային վճռի հար-  
կադիր կատարումը, մերժում է դիմող կողմի նյութական իրավունքի  
հարկադիր իրացումը (իրավական պաշտպանությունը) և այն վճիռը,  
որը դիմողի համար նյութական իրավունք էր սահմանում, դառնում  
է պարտադիր, հարկադիր իրավական հետևանքներ չառաջացնող  
փաստաթուղթ: Այսպիսով, ստացվում է, որ պրոցեսուալ պահանջն  
արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման դեպ-  
քում ինքնաբերաբար հանգեցնում է նյութաիրավական պահանջի ի-  
րացմանը, իսկ ճանաչման և հարկադիր կատարման մերժման դեպ-  
քում մերժվում է նաև արբիտրաժային վճռով սահմանված նյութա-  
կան իրավունքի իրացումը:

Արբիտրաժային վճռի առկայության պարագայում, արբիտրաժի  
կողմը, որի օգտին կայացվել է արբիտրաժային վճիռը ձեռք է բերում  
այդ վճռի հարկադիր կատարում պահանջելու պրոցեսուալ իրա-  
վունք: Այդ պարագայում, «պարտապանն» առարկելով վճռի հարկա-  
դիր կատարման պահանջի դեմ, վիճարկում է այդ իրավունքը, որի  
հետևանքները նեգատիվ առումով դառնում են նյութաիրավական:  
Հետևաբար, քննարկվող դեպքում, երբ ծագում է պրոցեսուալ իրա-  
վունքի վերաբերյալ վեճ, այն պետք է քննվի արբիտրաժային վճիռնե-  
րի վիճարկման վարույթի համար սահմանված հատուկ կանոննե-  
րով:

Ընդհանուր կանոնի համաձայն, ընդհանուր իրավասության դատարանը կաշկանդված է կողմերի պահանջներով: Այն դեպքում, երբ մի կողմը դատարան է ներկայացնում արբիտրաժային վճռի ճանաչման և կատարման պահանջ, իսկ մյուս կողմն առարկում է այդ պահանջի դեմ (ընդ որում կարևոր է ընդգծել, որ այդ առարկություններն ունեն պրոցեսուալ բնույթ) դատարանը պարտավոր է կամ ճանաչել արբիտրաժային վճիռն ու կատարողական թերթ տրամադրել, կամ մերժել այդ դիմումը՝ մյուս կողմի առարկությունների հիման վրա: Բոլոր դեպքերում, արբիտրաժային վճռի ճանաչման, կատարման վարույթները ևս, որոնցում հնարավոր է մյուս կողմի առարկությունը (որպիսի դեպքում գործում է իրավունքի պաշտպանության միջոցի տնօրինման կառուցակարգը) Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի սահմաններում, դատարանը պարտավոր է քննել նշված դիմումը և դրա դեմ առարկությունը արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի համար սահմանված հատուկ կանոններով: Այս նպատակով անհրաժեշտ է համապատասխան լրացում կատարել ՀՀ ՔԴՕ 103-րդ հոդվածում, իսկ սպազայի համար այն ներառել ՀՀ ՔԴՕ նոր նախագծում: Կատարողական թերթի տրամադրումը մերժելու պարագայում վեճը հանգուցալուծվում է: Սակայն, հաշվի առնելով վիճարկման վարույթի թերի կարգավորումը պրակտիկայում կարող են առաջանալ հետևյալ խնդիրները: Դատարանը, մերժելով արբիտրաժային վճռի կատարողական թերթի տրամադրումը, չի կարող իր նախաձեռնությամբ չեղյալ ճանաչել այդ վճիռը: Մյուս կողմից, եթե վճռի կատարման դեմ առարկող կողմը նույն դատարանին և նույն վարույթի շրջանակներում չեղյալ ճանաչման դիմում ներկայացնի առարկության կամ հակընդդեմ հայցի ձևով, դա կհակասի ներկայիս դատավարական կարգավորումներին հետևյալ պատճառաբանությամբ: Թեև չեղյալ ճանաչումը և ճանաչման ու հարկադիր կատարման մերժման վարույթները հանդիսանում են վիճարկման վարույթի տարբեր ձևեր, դրանք չեն նույնանում: Արբիտրաժային օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Սույն օրենքի գործողությունը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ, 9-րդ, 35-րդ և 36-րդ հոդվածների, տարածվում է միայն այն արբիտրաժի վրա, որի վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում է»: Այսինքն, նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված վճռի վիճարկումը դրա չեղյալ ճանաչման դիմումով դատարան դիմելու միջոցով չի կարող

իրացվել միջազգային կամ օտարերկրյա արբիտրաժների՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչման և հարկադիր կատարման վարույթում, քանզի հայրենական արբիտրաժային օրենքը որդեգրել է միջազգայնորեն ընդունված այն սկզբունքը, որ արբիտրաժային վճիռը կարող է չեղյալ ճանաչվել արբիտրաժի վայրի (պետության) դատարանում: Նույնիսկ ներպետական արբիտրաժի պարագայում, չեղյալ ճանաչման դիմումը պետք է քննվի առանձին կարգով, քանզի չեղյալ ճանաչված դիմումի ճանաչման կամ կատարման հարց այլևս չի կարող քննարկվել: Պրակտիկայում, տողերիս հեղինակն օրինակ հարցը լուծել է հետևյալ կերպ. երբ արբիտրաժում հաղթած կողմը՝ «պարտատերը» դիմում է իրավասու դատարան՝ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար, մյուս կողմը դիմում է նույն դատարանին վճռի չեղյալ ճանաչման մասին առանձին դիմումով: Այդ դիմումը վարույթ ընդունվելուց հետո, կողմն արդեն արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման վարույթում միջնորդում է այդ վարույթը կասեցնել, մինչև չեղյալ ճանաչման դիմումով հարուցված քաղաքացիական գործով որոշման կայացումը: Դատարանը բավարարել է այդ միջնորդությունը, ինչը վերոշարադրյալ հիմնավորումներից ելնելով տրամաբանական է<sup>1</sup>: Եթե վիճարկման վարույթի երկու դիմումներն էլ մակագրվեն իրավասու դատարանի նույն կազմին, ապա ներկայիս իրավակարգավորումներից ելնելով, կարելի է բարձրացնել այդ գործերի միացման հարցը: Այսպիսով, արբիտրաժային վճռի վիճարկման դրական ելքի դեպքում, արբիտրաժային վճիռն այլևս իրավական հետևանք չի առաջացնում: Հաջորդ խնդիրը վերաբերում է հետևյալին, եթե դատարանն առանց քննության թողնի ճանաչման և հարկադիր կատարման դիմումը և անցնի կատարողական թերթ տրամադրելու մերժման առնչությամբ բերված առարկությունների քննության վարույթ (այն առավել մոտ է հատուկ հայցային վարույթին, սակայն ՀՀ ՔԴՕ ներկայիս կարգավորումներից դուրս է), որում էլ կատարողական թերթ տրամադրելը մերժելու մասին կողմի դիմումը չի բավարարվում, ապա սկզբնական դիմումի քննության հարցը կարող է մնալ առկախված: Սույն խնդիրը լուծելու համար, ՀՀ ՔԴՕ-ում անհրաժեշտ է հատուկ նորմ սահմանել, համաձայն որի, արբիտրաժային

---

<sup>1</sup> Տե՛ս ԵԿԴ-1263/17/14 գործը:

վճռի չեղյալ ճանաչման կամ ճանաչման և/կամ հարկադիր կատարման մերժման դիմումի մերժման մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում, ճանաչման և հարկադիր կատարման դիմումը քննող դատարանը կողմի դիմումով անհապաղ վերսկսում և ավարտում է գործի (դիմումի) քննությունը և տրամադրում է արբիտրաժային դատարանի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ:

Այսպիսով, արբիտրաժային վճիռը կարող է վիճարկվել թե՛ դրա չեղյալ ճանաչման և թե՛ դրա ճանաչումը կամ հարկադիր կատարումը մերժելու մասին դատարանին դիմելով: Արբիտրաժային վճռի վիճարկումն ընդգրկում է թե՛ չեղյալ ճանաչման և թե՛ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման վարույթներն ընդհանուր իրավասության դատարանում:

Ինչպես նշեցինք վերևում, արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը սահմանափակ են ու սպառիչ և սահմանված են Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածներում: Վիճարկման հիմքերի սպառիչ բնույթը համահունչ է Արբիտրաժային օրենքի 5-րդ հոդվածով սահմանված արգելքի հետ, ըստ որի արգելվում է որևէ դատական միջամտություն Արբիտրաժային օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ Արբիտրաժային օրենքով նախատեսված դեպքերի: Այս, կարելի է ասել սկզբունքային դրույթը նույնպես ընդգծում է արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերի սպառիչ բնույթը: Արբիտրաժային վճռի վիճարկման վարույթը, որպես քաղաքացիական դատավարության տարբերակված ձև, պետք է ենթադրի դատական կարգով իրավունքի պաշտպանության լիարժեք երաշխիքների առկայություն, այդ թվում, արդար դատաքննության իրավունքի այն տարրերի իրացման ապահովում, որոնք կիրառելի են տարբերակված քաղաքացիադատավարական այս ձևի նկատմամբ: Ուստի, օրենսդրորեն պետք է ապահովել նաև իրավունքի խախտմամբ կայացված դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը, քանզի դատական ակտի բողոքարկումը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի ապահովման հիմնական իրավական կառուցակարգը:

Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածում բերված վիճարկման հիմքերի նույնիսկ մակերեսային վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ դրանք չեն վերաբերվում են արբիտրաժային դատարանի

կողմից վեճի հանդեպ կիրառելի նյութական իրավունքի նորմերի խախտմանը կամ սխալ կիրառմանը: **Վիճարկման հիմքերն ուղղված են ապահովելու կողմերի վավեր արբիտրաժային համաձայնության առկայության և արբիտրաժում կողմերի նկատմամբ կիրառված հավասար մոտեցման և յուրաքանչյուր կողմին իր գործի ներկայացման համար բոլոր հնարավորությունների տրամադրման պայմաններում՝ արբիտրաժային դատարանի իրավասությանը ենթակա վեճի՝ անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից արդարացի լուծումը:** Հարկ է ընդգծել, որ թե՛ ՀՀ տարածքում կայացված, այսպես կոչված տեղական, և թե՛ օտարերկրյա արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը համընկնում են: Մա պայմանավորված է իվերո հիշատակված այն հանգամանքով, որ հայրենական արբիտրաժային օրենքը սահմանելով արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը դրանք խարսխել է Նյու-Յորքի Կոնվենցիայի V հոդվածի հիմքերի վրա: Այսպիսով, վիճարկման վարույթի կողմի՝ վերոթվարկյալ հիմքերից դուրս վկայակոչած հիմքերին դատարանն ընդհանրապես չպետք է և նույնիսկ չի կարող անդրադառնալ: Թե՛ տեղական և թե՛ օտարերկրյա արբիտրաժային վճիռների վերջնական և պարտադիր լինելը սերտորեն կապված է դրանց վիճարկման օրենքով սահմանված սպառիչ հիմքերի հետ, իսկ այդ (վերջնականության ու պարտադիրության) սկզբունքների իրականացումը ՀՀ-ում ապահովվում է օրենսդրության մի շարք հիմնարար նորմերով:<sup>1</sup> Ընդ որում, արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը, ելնելով դրանք վկայակոչելու, դրանց առկայությունը ապացուցելու և պարզելու Արբիտրաժային օրենքով սահմանված սուբյեկտների կազմից կարելի է դասակարգել երկու խմբի: Առաջին խումբը ներառում է այն դեպքերը, երբ արբիտրաժային դատարանի վճիռը վիճարկվում է արբիտրաժային համաձայնության արատների և արբիտրաժային վարույթի ընթացակարգային խախտումների հիմքերով. ընդ որում, նշված խախտումների առկայության ապացուցման բեռն Արբիտրաժային օրենքով այս դեպքում դրված է այն կողմի վրա, ով իրավասու դատարանի առջև վիճարկել է արբիտրաժային վճիռը (դրա չեղյալ ճանաչման կամ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման խնդրանքով դիմելով): Առաջին խմբի մեջ մտնող հիմքերին իրավա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՔԴՕ 109-րդ հոդվածի 3-րդ, 247<sup>6</sup>, 247<sup>7</sup> հոդվածները:

սու դատարանը կարող է անդրադառնալ և հղում կատարել դրանց վրա միմիայն արբիտրաժային վճռի վիճարկմամբ հանդես եկող կողմի դիմումով:

Արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերի դասակարգման երկրորդ խումբն իրենում ներառում է արբիտրաժային դատարանին վեճի (գործի) առարկայական ենթակայությամբ (վեճի այսպես կոչված արբիտրաժայնության) կամ ՀՀ իրավակարգի հիմունքներին (հանրային կարգին) հակասելու փաստով պայմանավորված պատճառները: Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ հոդվածների կառուցվածքից և դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակության վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ անկախ դիմողի կողմից վերոնշյալ ա) և/կամ բ) կետերի հիմքերով արբիտրաժային վճռի վիճարկումը, դատարանն ամեն դեպքում վիճարկման վարույթում պարտավոր է իր նախաձեռնությամբ անդրադառնալ նշված հիմքերին և պարզել թե դրանք ինչ հարաբերակցության մեջ են գտնվում արբիտրաժային վճռի հետ: Այս առնչությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետը սխալ թարգմանության արդյունքում կրկնել է նույն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի բ) ենթակետը: Այսպես, Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի տրամաբանության մեջ տեղավորվում է, որ վճռի վիճարկումը դրա չեղյալ ճանաչման միջոցով կարող է (պետք է) տեղի ունենա եթե վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին: Մինչդեռ, նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետը վերաբերում է ոչ թե նրան, որ արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը կարող է (պետք է) մերժվի, եթե այդպիսի վճիռը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին, այլ սովյալ դեպքում, ելնելով 36-րդ հոդվածի կարգավորման առարկայից, դատարանը պետք է պարզի թե արդյո՞ք արբիտրաժային վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը կարող է հակասել Հայաստանի Հանրապետության հանրային կարգին: Ասվածի ճշմարտությունը ապացուցում է նաև Նյու Յորքի կոնվենցիայի V հոդվածի 2-րդ մասի բ) կետի անգլերեն բնագիրը «the recognition or enforcement of the award would be contrary to the public policy of that country», դրա հայերեն թարգմանությունը, ինչպես նաև Մոդելային օրենքի 36 (v) (b) (ii) են-

թակետի անգլերեն բնօրինակը «the recognition or enforcement of the award would be contrary to the public policy of this State.»։ Հայրենական օրենքի նշված կետի ներկայիս խմբագրությունը փաստորեն հակասության մեջ է Նյու Յորքի կոնվենցիայի, մասնավորապես դրա III հոդվածի առաջին պարբերության հետ, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուր Պայմանավորվող պետություն արբիտրաժային որոշումները ճանաչում է որպես պարտադիր և դրանք կատարում է այն տարածքի դատավարական նորմերին համապատասխան, որում հայցվում է ճանաչումը և կատարումը՝ ներքոշարադրյալ հոդվածներով նախատեսված պայմաններով»։ Այսինքն, օտարերկրա արբիտրաժային դատարանի վճռի ճանաչման և հարկադիր կատարման վարույթի դեպքում, եթե առաջանա վեճ՝ կապված այդ օտարերկրյա վճռի ճանաչման կամ հարկադիր կատարման հետ, Հայաստանի Հանրապետության իրավասու դատարանը, օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչումը և/կամ հարկադիր կատարումը մերժելու հարցը պարզելիս, ելնելով մեր պետության «դատավարական նորմերից» (տվյալ դեպքում Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի բ) ենթակետից) ստիպված է լինելու պարզել ոչ թե օտարերկրյա արբիտրաժային վճռի ճանաչման կամ հարկադիր կատարման, այլ հենց վճռի հակասությունը ՀՀ հանրային կարգին, ինչը վերոհիշյալ հիմնավորումների ներքո արբիտրաժային վճռի ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման հիմք չի կարող հանդիսանալ։

Արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետերով սահմանված հիմքը նշանակում է, որ արբիտրաժային դատարանի կողմից քննվող գործն ըստ օրենքի չի կարող ենթակա լինել արբիտրաժին և լուծվել արբիտրաժի միջոցով։ Արբիտրաժային օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի ուժով կարելի է փաստել, որ արբիտրաժի լուծմանը հանձնվող վեճերի տեսակների հայեցողությունը տրված է ոչ թե վեճի կողմերին, այլ օրենսդրին, ինչը նշանակում է, որ տվյալ դրույթը հանդիսանում է իմպերատիվ բնույթ ունեցող դրույթ։ Այսինքն, վարչական կամ այլ հանրային (ուղղահայաց) իրավահարաբերություններից բխող վեճերն արբիտրաժի լուծմանը ենթակա չեն, նույնիսկ եթե վիճող կողմերը ցանկանում են տվյալ վեճն արբիտրաժի քննությանը հանձնել։ Եթե արբիտրաժային դատարանը, ցանկացած պատճառով անտեսի

որոշակի վերոնշյալ կատեգորիայի վեճերն օրենքով իրեն վերապահված չլինելու հանգամանքը և դրանք իրեն հանձնվելիս վերադարձնելու ու չքննելու փոխարեն այնուամենայնիվ այդպիսի վեճը լուծի և դրա էություն մասին վճիռ կայացնի, ապա արբիտրաժային դատարանի այդպիսի վճիռը ենթակա կլինի չեղյալ ճանաչման:

Ինչ վերաբերում է արբիտրաժային վճռի՝ ՀՀ հանրային կարգին հակասելու հիմքերով վճռի վիճարկման դեպքերին, ապա դատարանը կարող է այդպիսիք արձանագրել, օրինակ այն ժամանակ, երբ արբիտրաժային դատարանն իր վճռով կողմերին պարտավորեցնում է կատարել չարամիտ համաձայնությամբ կամ ստրկացուցիչ պայմաններով կնքված գործարքը: Կարևոր է շեշտել, որ վիճարկման երկրորդ խմբի մեջ մտնող հիմքերից յուրաքանչյուրի առկայության դեպքում արբիտրաժային վճիռը, կախված դիմումից, ենթակա է չեղյալ ճանաչման կամ հարկադիր կատարման մերժման՝ անկախ այն հանգամանքից, թե վճիռը վիճարկող կողմն իր վիճարկման դիմում նշել է այդ հիմքերը, թե ոչ: Այլ կերպ ասած, եթե նույնիսկ կողմը վիճարկում է արբիտրաժային վճիռը դասակարգման առաջին խմբի մեջ մտնող հիմքերով, իրավասու դատարանը պարտավոր է իր սեփական նախաձեռնությամբ պարզել, արդյո՞ք տվյալ գործը ենթակա է եղել արբիտրաժային դատարանում քննության և չի՞ հակասում արդյոք այն հայկական իրավունքի հիմնարար սկզբունքերին:

Խոսելով Նյու Յորքի Կոնվենցիայի V, ինչպես նաև հայրենական օրենքի 34 և 36-րդ հոդվածներում առկա հիմքերի մասին, անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այդ նորմերով սահմանված՝ արբիտրաժային վճիռների վիճարկման հիմքերը պարզելու և դրանք կիրառելու դատարանի հայեցողական իրավունքի և պարտականության հարցին: Թե՛ Կոնվենցիան, թե՛ Սոդեյլային օրենքը և թե՛ հայրենական արբիտրաժային օրենքը սահմանելով արբիտրաժային վճռի վիճարկման հիմքերը, դատարանի համար սահմանում են հայեցողական իրավունք: Այսպես, Կոնվենցիայի V հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Արբիտրաժային որոշման ճանաչումը և կատարումը *կարող է մերժվել* այն Կողմի խնդրանքով, որի դեմ է այն ուղղված...»: Հայրենական արբիտրաժային օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Արբիտրաժային տրիբունալի վճիռը *կարող է չեղյալ ճանաչվել* սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարանի կողմից միայն այն դեպքում, եթե...»: Նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-

ին մասը սահմանում է. «Արբիտրաժային տրիբունալի վճռի ճանաչումը կամ հարկադիր կատարումը, որը կայացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում կամ Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ճանաչման և կատարման մասին Նյու Յորքի կոնվենցիայի անդամ որևէ այլ պետության տարածքում, *կարող է մերժվել միայն...*»: Մեջբերված նորմերում «կարող է» բառի գործածումը կարևորվել է միջազգային պրակտիկայում և գիտական գրականությունում<sup>1</sup>, որպես ազգային, ներպետական դատարաններին իրավասություն տվող հարց: Ըստ դասական մոտեցման, վերոհիշյալ դասակարգման երկու խմբերում առկա հիմքերը իրավասու դատարանին ընձեռում են արբիտրաժային դատարանի վճիռը չեղյալ ճանաչելու իրավունք, այլ ոչ թե պարտականություն: Կոնվենցիայի հինգ պաշտոնական լեզուներից չորսը՝ անգլերենը, ռուսերենը, չինարենը և իսպաներենը նույնպես օգտագործում են «կարող է» բառը: Մինչդեռ, ֆրասերեն բնօրինակում գործածված է «seront refusées» - «ենթակա է մերժման» կամ «մերժվում է» իմպերատիվ արտահայտությունը: Գտնում ենք, որ տվյալ հարցում ՀՀ-ում ներկայումս պետք է որդեգրել դատարանների ոչ թե հայեցողական իրավունքի այլ պարտականության սկզբունքը և «կարող է» բառը փոխարինել «պետք է» բառով: Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ դիմող կողմի կամ իր նախաձեռնությամբ դատարանը կգա այն եզրահանգման, որ առկա է (են) արբիտրաժային վճիռը վիճարկելու հիմք(եր)ը, ապա դատարանը պարտադիր կերպով վճիռը չեղյալ պետք է ճանաչի կամ մերժի դրա հարկադիր կատարումը: Այս առումով անհրաժեշտ է փոփոխել համապատասխանաբար Արբիտրաժային օրենքի 34 և 36-րդ, ինչպես նաև ԴԱՀԿ մասին ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ օտարերկրյա արբիտրաժային վճիռը ՀՀ-ում չի կարող վիճարկվել դրա չեղյալ ճանաչման միջոցով, քանզի արբիտրաժային վճիռը չեղյալ է ճանաչվում դրա կայացման վայրի պետության դատարանի կողմից: Տվյալ դեպքում, օտարերկրյա արբիտրաժային վճիռը ՀՀ-ում կարող է վիճարկվել Արբիտրաժային օրենքի 36-րդ հոդվածի իրավակարգավորումների ուժով վճռի

---

<sup>1</sup> Sté u **Карабельников Б. Р.**, Исполнение и оспаривание решений международных коммерческих арбитражей, Комментарий к Нью-Йоркской конвенции 1958 г. и главам 30 и 31 АПК РФ 2002 г., 3-е изд., перераб. и доп. М., Статут, 2008, 606 էջ, 119 էջ:

ճանաչման և կատարման դեմ առարկելու միջոցով: Մուրյեկտիվ իրավունքների պաշտպանության տեսանկյունից միևնույն արբիտրաժային վճիռների համար ճանաչման տարբեր իրավական ռեժիմներ սահմանելը սխալ է: Այսպիսով, կարելի է փաստել, որ արբիտրաժային տերմինաբանության միատեսակության կատարելագործման առումով օրենսդիրը կարող է կիրառել «միջազգային և առևտրային արբիտրաժային որոշումներ» եզրույթը: Ինչ վերաբերում է արբիտրաժային վճիռների ճանաչմանը և հարկադիր կատարմանը, ապա հարկ է փաստել, որ հայրենական արբիտրաժային վճիռները ներկայիս իրավակարգավորումների պարագայում ենթակա են եռաստիճան դատական համակարգով անցնելուն, ինչն անխուսափելիորեն բերում է արբիտրաժի «առանց անհարկի ձգձգումների» և վեճի լուծման օպերատիվության լայնորեն ընդունված սկզբունքների խաթարմանը, ինչպես նաև վիճող կողմերի դատական ծախսերի ավելացմանը: Այս առումով շահեկանորեն տարբերվում է «միջազգային արբիտրաժի որոշումների» ճանաչումը, որի համար պահանջատերը դիմում է ուղղակիորեն ՀՀ վճռաբեկ դատարան: Հաշվի առնելով արբիտրաժային դատարանների կայացվածության անբավարար աստիճանը և արբիտրաժային մշակույթի թերզարգացվածությունը Հայաստանում, կարելի է առաջարկել ավելի ճկուն և երկուստեք «փոխզիջումային» տարբերակ, որը մի կողմից կնվազեցնի արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի իրականացման ժամանակ հնարավոր անհարկի ձգձգումները և անբարեխիղճ կողմի՝ իր իրավունքների չարաշահման հնարավորությունները, մյուս կողմից ամեն դեպքում դեռևս կընձեռի վերադաս դատական ատյանի կողմից արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթների գործերով հսկողության հնարավորություն: Սա պարարտ հող կստեղծի տվյալ բնագավառում իրավունքի զարգացման և օրենքի միատեսակ կիրառման առումով, նախադեպային որոշումների կայացման համար և արբիտրաժային մշակույթի զարգացման որոշակի փուլում կապահովի վիճարկման վարույթի առավել առաջադեմ կարգավորումների «անցավ» ներդրման համար: Այս առումով հատկանշական է Եվրոպայի խորհրդի նախարարների խորհրդի 1995 թ. փետրվարի 7-ի № R (95) 5 հանձնարարականն անդամ-պետություններին՝ քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ընթացակարգերի և համակարգերի գործողության մեջ դնելու և կատարելագործելու վերաբերյալ: Սույն Հանձնարարականը, մասնավորապես՝ «նկատի ու-

*նենաչով* բողոքների թվի ավելացմամբ և դրանցով վարույթների տևողությամբ պայմանավորված խնդիրները, ... *հաշվի առնելով*, որ այդպիսի խնդիրները կարող են նսեմացնել Կոնվենցիայով՝ նախատեսված ցանկացած անձի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունքը, ... *գիտակցելով*, որ բողոքարկման անարդյունավետ և սխալ ընթացակարգերն ու կողմերի՝ իրենց բողոքարկման իրավունքը չարաշահելը չարդարացված ձգձգումների պատճառ են հանդիսանում և կարող են խաթարել արդարադատության համակարգի նկատմամբ վստահությունը ...», հնարավոր է համարում ստորադաս դատարանի ցանկացած վճռի հանդեպ վերադաս դատարանի կողմից հսկողության սկզբունքից վերապահում, իհարկե, պայմանով, որ յուրաքանչյուր այդպիսի վերապահում պետք է հիմնված լինի օրենքի վրա և պետք է համապատասխանի արդարության ընդհանուր սկզբունքներին<sup>2</sup>: Նշված Հանձնարարականն, այնուհետև սահմանելով բողոքարկման իրավունքից դուրս մնացող հարցերի շրջանակը, նախատեսում է, որ երկրորդ ատյանի դատարանների կողմից միայն պատշաճ հարցերի քննությունն ապահովվելու նպատակով, հարկ է, որ պետությունները քննարկեն Հանձնարարականում թվարկված ուրույն կամ բոլոր միջոցների ընդունման հնարավորությունը, որոնց շարքում թվարկված է մի շարք կատեգորիայի գործերով վերաքննիչ բողոք բերելու իրավունքի բացառումը<sup>3</sup>: Եվրոպական այս հեղինակավոր կառույցի նման մոտեցումները գալիս են ամրապնդելու այն մոտեցումը, որ նպատակահարման չէ բացարձականացնել Եվրոպային կամ արևմուտքից մեզ հասնող յուրաքանչյուր «ուղերձ», ինչպես, դա ցավոք վերջին ժամանակներս «նորաձև» մոտեցում է դարձել, երբ ցանկացած ստեղծագործ միտք վիժեցվում է ի սկզբանե, որպես կովան նշելով եվրոպական կառույցների կամ համաշխարհային բանկի փորձագետների կողմից այդ մոտեցումները չընդունելը (խիստ ընդհանրական արտահայտություններ անելով առանց իրավունքի աղբյուրներ նշելու) կամ ՄԻԵԿ-ին հակասելը: Իրականում, մեծմասամբ, դա նույն այդ եվրոպական կամ արևմտյան սկզբունքներում և մոտեցումներում իմպերատիվը հայեցողականից չտարբերող

<sup>1</sup> Ի նկատի է ունենում Մարդու իրավունքների և զգատությունների Եվրոպական Կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ):

<sup>2</sup> Հոդված 1, a և b կետեր:

<sup>3</sup> Հոդված 3, a կետ:

ու ծուլությամբ տոգորված անտեղյակ մարդկանց անընդունելի մոտեցում է: Այսպիսի դիլետանտական մոտեցումներին՝ որպես ցցուն հակափաստարկ, կարելի է նշել օրինակ նույն Եվրոպական միության դատական համակարգի կողմից այժմ լայնորեն ընդունված այն մոտեցումը, որ որոշակի նախապայմանների պահպանման դեպքում արբիտրաժի կողմերի՝ արբիտրաժային վճռի հետագա դատական վիճարկման իրավունքից հրաժարվելը չի հակասում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին<sup>1</sup>: Հաշվի առնելով վերոշարադրյալը, նպաստավոր կարող էր լինել Հայաստանի Հանրապետության տարածքը որպես արբիտրաժի վայր ընտրած կողմերին օրենսդրորեն իրավունք ընձեռել արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման միջոցով արբիտրաժային վճիռը վիճարկելու դեպքում ուղղակիորեն ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան դիմելու հնարավորություն սահմանելը<sup>2</sup>, իսկ արբիտրաժային վճռի ճանաչման և հարկադիր կատարման համար նախատեսված ներկայիս խառնաշփոթ առաջացնող իրավակարգավորումները<sup>3</sup> պարզեցնել հետևյալ կերպ: ՀՀ տարածքում իրականաց-

---

<sup>1</sup> Sté u **А. А. Ягельницкий, О. Д. Петроль**, Соглашения об отказе от права на оспаривание решения международного коммерческого арбитража, Новые горизонты международного арбитража, Сборник статей, 2014 г., Выпуск 2, 364, էջեր 259 -299:

<sup>2</sup> Սույն տեսակետին ընդդիմացող իրավաբան-գիտնականների կարծիքով, եռաստիճան դատական համակարգի պայմաններում դիմումատուն պետք է հնարավորություն ունենա վիճարկել արբիտրաժային վճիռը բոլոր դատական ատյաններում: Հատկանշական է, որ ՌԴ-ում արբիտրաժային բարեփոխումների շրջանակներում, սույն հարցը ևս հանդիսանում է բուն քննարկումների առարկա: Այսպես, Արբիտրաժային համայնքի փորձագիտական խորհրդի ձայները գրեթե կիսվում են այն հարցի շուրջ, թե «սահմանափակ չափով կրճատել այն իրավասու դատական ատյանների քանակը, որոնք իրավասու են քննել արբիտրաժային վճիռների վիճարկման և կատարման հարցերը»: (տե՛ս Третьейский Суд, № 1(91), 2014, էջեր 21-22):

<sup>3</sup> Sté u օրինակ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածում արբիտրաժային վճռի ճանաչման, ինչպես նաև հարկադիր կատարման մերժման կարգավորումները սահմանելիս ամենուր գործածված «կամ» շաղկապը (ճանաչման կամ հարկադիր կատարման), բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասի, որը սահմանում է վճռի ճանաչումը և հարկադիր կատարումը: Հայրենական օրենքի 35 և 36-րդ հոդվածների ներկայիս թե՛ խմբագրությունը և թե՛ կիրառման պրակտիկան կարծես ճանաչման ինստիտուտը որպես այդպիսին իմաստագուրկ են դարձրել, այն միշտ դիտարկելով հար-

րած արբիտրաժի դեպքում արբիտրաժային վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ ստանալու դիմումով արբիտրաժում հաղթած կողմը կարող է դիմել ընդհանուր իրավասության դատարան՝ առանց ճանաչման մասին դիմելու: Այս մոտեցման լրացուցիչ հիմնավորումը այն է, որ ՀՀ տարածքում իրականացված արբիտրաժն արդեն իսկ կարգավորվում է առևտրային արբիտրաժի մասին հայրենական օրենքով և դրա իմպերատիվ նորմերի պահպանմամբ իրականացրած արբիտրաժի արդյունքում կայացրած վճռի ճանաչման անհրաժեշտությունը բացակայում է: Ճանաչման ինստիտուտը հատուկ է միջազգային առևտրային արբիտրաժին, երբ առաջանում է մեկ պետության տարածքում կայացրած արբիտրաժային վճիռը մեկ այլ պետությունում հարկադիր կատարելու հրամայական: Այս դեպքում, օտար պետության տարածքում այդ երկրի արբիտրաժային օրենքի համապատասխան իրականացված արբիտրաժի արդյունքում կայացրած արբիտրաժային վճռի ճանաչումը տրամաբանական է: Մինչդեռ, նույն պետության տարածքում իրականացված արբիտրաժի դեպքում ուղղակիորեն հարկադիր կատարման համար իրավասու դատարան դիմելը բխում է առնվազն արդարադատության տնտեսման սկզբունքից: Ինչ վերաբերում է տվյալ դեպքում օրենքի իմպերատիվ նորմերը չպահպանելուն, ապա այս դեպքում արբիտրաժում պարտված կողմը կարող է դրանք ի ցույց դնել թե՛ հարկադիր կատարման մերժման և թե՛ վճռի չեղյալ ճանաչման համար իրավասու դատարան դիմելով: Ընդ որում, արբիտրաժային վճռի հարկադիր կատարման դեմ առարկող կողմն իր վիճարկումը պետք է իրականացնի նույն դատարանում, որտեղ հայցվում է այդ վճռի ճանաչումն ու հարկադիր կատարումը, դրա մերժման խնդրանքով նույն դատարանին դիմելու միջոցով: Այս կա-

---

կադիր կատարման համար պարտադիր փուլ: Մինչդեռ, Մոդելային օրենքի մշակողները գործածելով «կամ» շաղկապը, ցանկացել են ընդգծել «ճանաչման» և «հարկադիր կատարման» առանձին գործառույթները և դրանց առանձին գործածման հնարավորությունը, հատկապես միջազգային արբիտրաժի ասպարեզում: Օրինակ, ճանաչման վճիռների պարագայում, արբիտրաժի կողմը կարող է տնօրինել իրավասու դատարան դիմելու և վճռի ճանաչում ստանալու իր իրավունքն առանց կատարման համար դատարան դիմելու: Դա կարող է լինել օրինակ իրավունքի ճանաչման վեճերով կայացված արբիտրաժային վճիռների դեպքում:

տեգորիայի գործերով ևս կողմերի համար անհրաժեշտ է սահմանել բողոքարկման իրավունք, սակայն վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելու ավելի կրճատ ժամկետով՝ օրինակ վճռի կայացումից հետո տասը աշխատանքային օր սահմանելով: Սա հնարավորություն կտա ավելի մոտենալ առանց անհարկի ձգձգումների կամ ծախսերի անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից վեճերի արդարացի լուծում ստանալու օրենսդրորեն ամրապնդված սկզբունքի իրականացմանը: Բացի այդ, առաջարկվող իրավակարգավորման ներդրումը կխթանի օրինակ Ռուսաստանի Դաշնության փաստաբաններին՝ որպես իրենց կողմից սպասարկվող կամ սպասարկվելիք արբիտրաժային վեճերի լուծման վայր Հայաստանի Հանրապետությունն ընտրելը, քանզի Հայաստանում կայացրած արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչման միջոցով արբիտրաժային վճռի վիճարկման բողոքարկումը կունանա օպտիմալացված ընթացակարգ: Նույնը կարելի է ասել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների մասին միջազգային վեճերի մասով: Հայաստանի տարածքում իրականացված արբիտրաժի դեպքում այլևս չի առաջանա Հայաստանում դրա ճանաչման անհրաժեշտությունը: Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտների մասնակցությամբ միջազգային առևտրային արբիտրաժային վեճերի լուծման վայրը Հայաստանի Հանրապետությունը դարձնելու առումով ներկայումս գտնվում ենք հիբրավի պատմական հնարավորությունների խաչմերուկում: Մի կողմից Ռուսաստանի Դաշնության դեմ արևմուտքի կողմից կիրառվող պատժամիջոցները, իսկ մյուս կողմից Հայաստանի Հանրապետության Եվրասիական Տնտեսական միությանն անդամակցելը, այդ առումով մեր շահեկան աշխարհագրական դիրքը, պարարտ հող են նախապատրաստել Հայաստանը արբիտրաժային տարածաշրջանային կենտրոն դարձնելու համար: Սկսած 90-ականների վերջերից, որոշ երկրների օրենսդրությունը և պրակտիկան պայմանագրի կողմերին թույլատրում են սահմանափակել արբիտրաժային վճիռների հետագա դատական վիճարկումը<sup>1</sup>: Նշված նորմերն ամրապնդում են արբիտրաժային վճռի վերջնական բնույթի և դատական միջամտության սահմանափակման վերջին տասնամյակում լայն թափ առած միտումները: Դրանց արմատները թերևս գտնվում են Նյու Յորքի կոնվենցիայի և

<sup>1</sup> Այդպիսի իրավունք է վերապահված, օրինակ, 1999 թ. «Արբիտրաժի մասին» շվեդական օրենքի 51-րդ հոդվածով:

Միջազգային առևտրային արբիտրաժի մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Ժնևի կոնվենցիա) նորմերում (հոդվ. II և IX):

*Айк Оганесян*  
*Соискатель кафедры гражданского процесса ЕГУ*

## ОСНОВАНИЯ ОСПАРИВАНИЯ АРБИТРАЖНЫХ РЕШЕНИЙ И ИХ КЛАССИФИКАЦИЯ

В статье изучены, проанализированы и классифицированы основания для оспаривания арбитражных решений, связанные с ними международные договора и модельный закон. Отдельное внимание уделено ряду вопросам усмотрительного права и обязанности суда на применение оснований оспаривания, законодательного регулирования оспаривания арбитражных решений, а также единообразного применения арбитражной терминологии.

*Hayk Hovhannisyan*  
*Applicant of the YSU Chair of Civil Procedure*

## GROUND OF CHALLENGING ARBITRAL AWARDS AND THEIR CLASSIFICATION

Grounds of challenging arbitral awards are researched, analyzed and classified as well as related international treaties and model law. Separate attention is paid to number of questions regarding discretionary right and duty of the court to apply to challenging grounds, legislative regulation of challenging of arbitral awards and uniform application of arbitral terminology.

**Բանալի բառեր՝** արբիտրաժ, արբիտրաժային վճիռ, Նյու-Յորքի կոնվենցիա, արբիտրաժային վճրի վիճարկում, չեղյալ ճանաչում, վճրի կատարում:

**Ключевые слова:** арбитраж, арбитражное решение, Нью Йоркская Конвенция, оспаривание арбитражного решения, отмена, исполнение решения.

**Key words:** arbitration, arbitration award, New York Convention, challenging of arbitral award, setting aside, enforcement of the award.